

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝	Կրտսեր դպրոցականների մեջ զարգացել ինքնուրույնությունը «Լուսակիր» և «Կիսատ նախադասություն» մեթոդով
Անցկացման վայրը՝	Մարտունի
Աշխատանքի ղեկավար՝	Բեյբության Հասմիկ
Ուսուցիչ՝	Մուշեղյան Շուշան
Դպրոց՝	Մարտունու №2 հիմնական դպրոց

ՄԱՐՏՈՒՆԻ

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	2
ԳԼՈՒԽ.1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒԽ.2. ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ	4
ԳԼՈՒԽ.3. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ	
3.1. Խմբի նկարագիրը	7
3.2. Փորձարարական դաս-1	7
3.3. Փորձարարական դաս-2	8
ԳԼՈՒԽ.4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	10
ԳԼՈՒԽ.5. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	11
ԳԼՈՒԽ.6. ՀԱՎԵԼՎԱԾ	12
ԴԱՍԱՊԼԱՆ-1	12
ԴԱՍԱՊԼԱՆ-2	15

ԳԼՈՒԽ.1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: Ավանդական մետաղների գեղարվեստական մշակումը հայտնի է եղել հին ժամանակներից: Մարդը մի անգամ ճանապարհին հանդիպելով ոսկու, հիանում է նրա արևաշող փայլով ու գույնով, եղանակներ է գտնում այն պահպանելու համար: Օգտագործելով մետաղի այս որակները՝ համակցված գծերի և ձևերի ներդաշնակության հետ, մարդը ստեղծել է դեկորատիվ և կիրառական արվեստի անկրկնելի տեսակներից մեկը, որը մինչ օրս արդիական է և շարունակում է անդադար զարգանալ՝ աճող հետաքրքրություն ցուցաբերելով արվեստի այս տեսակի նկատմամբ: Մետաղի գեղարվեստական մշակում բաժինն ուսումնասիրելով աշակերտները հետազայում մեծ ձեռքբերումներ կարող են ունենալ, այս տեսանկյունից ևս արդիական է նշված թեման:

Հետազոտության նպատակը՝

- զարգացնել ինքնուրույնության և պատասխանատվության զգացումը,
- երեխաների մեջ համբերատարություն սերմանել դրվագման աշխատանքների միջոցով:

Այս թեման ուսումնասիրելով սովորողները կիմանան և կգիտակցեն.

- մարդու ներգործությունը արվեստի ոլորտում,
- մետաղների տեսակների առանձնահատկությունները,
- պատասխանատվության զգացումը թերթամետաղի հետ աշխատելիս:

Վերոնշյալի համաձայն սահմանվում են հետազոտության հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել կրտսեր դպրոցականի ինքնուրույնությունը և պատասխանատվության զգացումը աշխատանքի ընթացքում,
- ներկայացնել դրվագման աշխատանքների առանձնահատկությունները:

Առաջարկված խնդիրների լուծման նպատակով օգտագործվել են **հետազոտման հետևյալ մեթոդները՝** «Մտազրոհ» կամ «Մտքերի տարափ», «ԳՈՒՍ», «Հարցադրումների», «Զրույցի», «Լուսակիր», «Կիսատ նախադասություն»:

ԳԼՈՒԽ.2. ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Միայն մարդն է ընդունակ աշխարհի նյութերը վերափոխելով ստանալ կյանքի համար անհրաժեշտ գործիքներ, սարքեր և համակարգեր: Սարքերի պատրաստումը սկսվում է անհրաժեշտ դետալների մշակումից և նախագծումից, իսկ այդ գործընթացի պատասխանատուները տեխնոլոգներն են:

Ինչպե՞ս է ձևավորվում էսթետիկ կրթությունը երեխայի մեջ: Երեխաներն ի ծնե ունեն էսթետիկ կրթվածություն, ժամանակի ընթացքում աստիճանաբար դրանք ի հայտ են գալիս: Գեղագիտական դաստիարակության ձևավորման մեջ կարևոր դեր է խաղում շրջակա միջավայրը: Երեխաների սենյակում և մանկապարտեզում իրավիճակը ձևավորվում է առաջին տպավորությունների միջոցով: Արտաքին ներդաշնակությունից բացի, երեխաները պետք է հասկանան, որ մենք պետք է սենյակը մաքուր պահենք: Կարևոր են նաև բնությունն ու շրջակա միջավայրը (4)¹: Ծնողները, ուսուցիչները պետք է ուշադրություն դարձնեն երեխայի ճիշտ դաստիարակմանը, որին կօգնի հետազայում դպրոցը: Կրտսեր դպրոցական հասակում «Տեխնոլոգիա» առարկան ուսումնասիրելիս, երեխաները մեծ կարողնակություններ, հմտություններ են ձեռք բերում և հետազայում ինչու չէ, նաև կիրառում դրանք:

Տեխնոլոգիան իրերի պատրաստման և փորձարկման գիտությունն ու արվեստն է: Ժամանակակից տեխնոլոգիաների ի հայտ գալուց առաջ տեխնոլոգները աշխատել են ահռելի ու բարդ հաստոցների առաջ:

Տեխնոլոգիական պրոցեսները հայտնի են եղել մարդկանց շատ վաղուց: Նախամարդն անգամ կարողացել է տեխնոլոգիական լուծումներ գտնել իր խնդիրները լուծելու համար՝ պատրաստում էր աշխատանքի պարագաներ, զարգացնում քարի, ապա նաև մետաղի մշակման մեխանիզմները:

Տեխնոլոգիայի մասին առաջին գրությունները հանդիպել են Հին Հունաստանում: Պատմական զարգացման այս փուլում տեխնոլոգիան ասոցացվում էր արվեստի հետ, բայց ժամանակի ընթացքում այն դարձավ արտադրական գործիքների արհեստ: Արտադրաան յուրաքանչյուր գործընթացում պահպանվել են տեխնոլոգիայի կանոնները:

¹ <https://mel.fm/blog/varvara-kotelnikova/50964-chem-uroki-tekhnologii-otlichayutsya-ot-urokov-truda>

Մեր օրերում արտադրական հզորությունը հասել է գագաթնակետին, շատ հաստոցները այսօր ավտոմատացվել են, այդպիսով «Տեխնոլոգիա» մասնագիտությունը դարձել է ավելի արդիական:

Հանրակրթական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի բովանդակության կարևոր բաղադրիչներից մեկը դա ստեղծագործական ունակությունների և կարողությունների զարգացումն է: Այս իմաստով նշանակալի դեր ունի նաև «Տեխնոլոգիա» առարկան (3, էջ 3)²: Տարրական դասարաններում աշակերտները առաջին քայլերն են կատարում «Տեխնոլոգիա» առարկայի աշխարհաընկալման համար: Ճանաչում են իրենց շրջապատող նյութերն ու երևույթները:

Տեխնոլոգիայի ուսումնասիրումը զարգացնում է ոչ միայն պոլիտեխնիկական մտահորիզոնը, ծանոթացնում տեխնիկայի նորություններին, նյութերի մշակման ժամանակակից տեխնոլոգիաներին, օգնում է կողմնորոշվել մասնագիտության ընտրության հարցում, այլև ինքնուրույն ստեղծագործական աշխատանք կատարելու հնարավորություն է ընձեռնում (2, էջ 3)³:

«Տեխնոլոգիա» առարկան դասավանդելիս շատ կարևոր է ճիշտ մեթոդ ընտրել: Յուրաքանչյուր թեմա ունի իր առանձնահատկությունները, այդ պատճառով դասաժամի յուրաքանչյուր փուլի համար պետք է կիրառել ինտերակտիվ մեթոդներ, աստիճանաբար կատարելագործելով դրանք:

Տվյալ աշխատանքի մեջ «Դասապլան» բաժնում կիրառել եմ.

- խթանման փուլում՝ «մտքերի տարափ» մեթոդը,
- իմաստի ընկալման փուլում՝ «հարցադրումների» և «գրույցի» մեթոդը,
- կշռադատման փուլում՝ «լուսակիր» մեթոդը:

Խթանման և իմաստի ընկալման փուլում կիրառած մեթոդները կարելի է համարել «ամենատարածված» մեթոդները, այդ իսկ պատճառով կցանկանայի ներկայացնել «Լուսակիր» մեթոդը: Մեթոդը նրանով է հետաքրքիր և կիրառելի «Տեխնոլոգիայի» դասաժամերին, որ աշակերտը պետք է շատ ուշադիր, ուշիմ լինի, որպեսզի մասնակցի

² «Տեխնոլոգիա» առարկայի չափորոշիչ և ծրագիր: ՀՀ ԿԳՆ նախարարություն Ս. Հովսեփյան, Մ. Աղաջանյան, Մ. Բարսեղյան, Երևան 2012թ.

³ Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան Տեխնոլոգիա 5-րդ դասարանի դասագիրք Եր., Տիգրան Մեծ. 2014թ.

հետագայում կատարվող աշխատանքին, եթե երեխան չհետևեց դասին, չի կարողանա գունավոր թերթիկները օգտագործի և կմեկուսանա:

Յուրաքանչյուր գույն իր առանձնահատկությունն ունի.

- Կանաչ գույն - ամբողջությամբ յուրացրել է թեման:
- Դեղին գույն - մասնակի է յուրացրել թեման:
- Կարմիր գույն - չի յուրացրել թեման:

Եթե կարմիր և դեղին թերթիկներ բարձրացնող աշակերտների թիվը շատ մեծ է, ապա նախընտրելի է, որ ուսուցիչը նորից անդրադառնա թեմային: Իսկ եթե թիվը մեծ չէ, ապա կանաչ գույն բարձրացրած աշակերտներին կարելի է հանձնարարել աջակցել իրենց դասընկերներին (5)⁴

Առանձնացրել եմ նաև «Կիսատ նախադասություն» մեթոդը, քանի որ դասի կշռադաստման փուլում շատ կարևոր է աշակերտների իմացությունը նոր թեմայի վերաբերյալ: Այս մեթոդը իրնեից ներկայացնում է, ինչպես վերնագրում է ասված, կիսատ նախադասություններ, որոնք 9-ն են, չնայած հնարավոր է և ավելացնել.

1. Ես այսօր սովորեցի...
2. Ինձ զարմացրեց...
3. Այսօրվա դասի ամենաօգտակար բանը...
4. Ինձ հետաքրքրեց...
5. Այս դասի ժամանակ ինձ ամենաշատը դուր եկավ...
6. Մի բան որ չհասկացա...
7. Մի բան, որ կուզեի ավելին իմանալ...
8. Այս դասից հետո ես զգում եմ...
9. Այս դասից ավելին կսովորեի, եթե...

Կիսատ նախադասությունների լրացումն օգնում է աշակերտներին ամփոփել դասը: Իր ընտրությամբ, ուսուցիչը կարող է տալ այս նախադասություններից մի քանիսը կամ բոլորը՝ աշակերտներին հնարավորություն ընձեռելով իրենց ցանկությամբ ընտրել այն կիսատ նախադասությունները, որոնք կուզենան ավարտել (1)⁵:

⁴ <https://multiurok.ru/files/met-od-met-od-met-od.html>

⁵ Հրանտ Ավանեսյան Պրոյեկտիվ մեթոդների գիտակիրառական առանձնահատկությունների համակարգումը/ Հրանտ Ավանեսյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2017, 256 էջ

ԳԼՈՒԽ.3. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

3.1. Խմբի նկարագիրը

Իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Մարտունու թիվ 2 հ/դ-ում 7⁹-րդ դասարանում:

Այս դասարանում սովորում են 14 տղա, որոնք ունեն տարբեր մակարդակների առաջադիմություն, կարողունակություն և հմտություն: Տեխնոլոգիան անցնում են շաբաթական 2 ժամ և այն տեղադրված է 7-րդ և 6-րդ ժամերին:

Տեխնոլոգիա առարկան երկու մոդուլով է դասվանդվում՝ աղջիկների և տղաների խումբ: Ես դասվանդում տղաների խմբին: Քանի որ առարկան ձեռքի հմտությունների բարելավմանն է նպաստում, տղաները ենթադրում են, որ ամեն ինչ շատ լավ են կարողանում անել, և լինում է, որ ցանկություն չեն ցուցաբերում նոր գիտելիքներ ձեռք բերելու համար: Այդ պատճառով պետք է մեծ ջանքեր գործադրի ուսուցիչը, որ կարողանա ապահովել սպասված վերջնարդյունքը: Այս ամենը հաշվի առնելով կարծում եմ, որ իմ ընտրած մեթոդները «Մտագրոհ», «Հարցադրումների», «Զրույցի», «Լուսակիր», առավել հետաքրքիր կդարձնեն իմ դասաժամը:

3.2. Փորձարարական դաս-1

Այսօրվա դասը վերաբերվում էր «Մետաղների դրվագում» թեմային (**տե՛ս դասապլան-1 էջ՝ 12**): Դասաժամը սկսվեց տնային աշխատանքի ստուգումով. աշակերտները ներկայացրին իրենց հանձնարարությունները: Տրվեց բանավոր հետադարձ: Նոր թեման սկսվեց «Մտագրոհ» մեթոդի միջոցով: Գրատախտակին գրվեց «Արվեստ» բառը, և աշակերտները կատարեցին քննարկում, արտահայտեցին իրենց մտքերը նշված թեմայի վերաբերյալ: Դասարանում գտնվող 14 տղաներն էլ մասնակցեցին հարցմանը և կատարեցին նշումներ իրենց նոթատետրերում:

Նոր թեման հաղորդվեց հարցադրումների և զրույցի մեթոդով, որին բոլոր աշակերտները մասնակցեցին սիրով, քանի որ թեման ուներ գեղարվեստական միտք, նշանակություն, և որը կապ ուներ «Կերպարվեստ» առարկայի հետ: Մետաղի գեղարվեստական մշակման մեջ մեծ տեղ ունեն նկարչական հմտությունները, և որը

աշակերտները ևս մեկ անգամ կարող էին կիրառել «Տեխնոլոգիայի» դասաժամի ընթացքում: Աշակերտներից մի քանիսը հաճախում են նկարչական խմբակներում, իսկ մնացածը պետք է բարելավեն իրենց ձեռքի հմտությունները, չնայած նրան, որ 6-րդ դասարանում արդեն իսկ այդ ամենի միջով անցել են, մի տարբերությամբ, որ ուսումնասիրել են «Նյութերի գեղարվեստական մշակում», որտեղ աշխատել են փայտի վրա, իսկ այս անգամ պետք է փորձեն մետաղի վրա կատարել այդ ամենը:

Այնուհետև դասը ամփոփվեց արդեն «Լուսակիր» մեթոդի միջոցով: Աշակերտները քանի որ համակ ուշադրությամբ էին լսում նոր նյութը կարողացան ինչպես հարկն է մասնակցեն դասի անդրադարձին: Աշակերտները պետք ցուցադրեին իրենց գունավոր քարտերը և բացատրեին նշանակությունը, աշակերտները հենց այնպես տարբերակ չունեին ուղղակի ցույց տալ քարտերը, Քանի որ.

- Կանաչ գույնը նշանակում էր, որ ամբողջությամբ յուրացրել է թեման:
- Դեղին գույնը նշանակում էր, որ մասնակի է յուրացրել թեման:
- Կարմիր գույնը նշանակում էր, որ չի յուրացրել թեման:

Եթե կարմիր և դեղին թերթիկներ բարձրացնող աշակերտների թիվը շատ մեծ է, ապա նախընտրելի է, որ ուսուցիչը նորից անդրադառնա թեմային: Իսկ եթե թիվը մեծ չէ, ապա կանաչ գույն բարձրացրած աշակերտներին կարելի է հանձնարարել աջակցել իրենց դասընկերներին (⁶):

Դասը ավարտվեց տնային աշխատանքի հանձնարարումով: Հանձնարարվեց այլումինե թերթամետաղը փորձել համաչափ կտրել 15սմ-ի չափով և կատարել հղկում, վերջնամշակում: Պատրաստել բոլոր անհրաժեշտ նյութերը, հաջորդ դասի համար /թերթամետաղ 15սմ-ի չափով, դրվագիչ, սպիտակ գուաշ, վրձին, ավագե պարկով տուփ, փոքր մուրճ/:

3.3. Փորձարարական դաս-2

Այսօրվա դասի թեման էր «Դրվագման տեխնոլոգիան» (տե՛ս դասապլան-1 էջ՝ 15): Թեման բավականին հետաքրքիր, մատչելի, հեշտ ընկալվող էր: Նոր դասը սկսվեց տնային աշխատանքի ստուգումով և քննարկումով:

⁶ <https://multiurok.ru/files/met-od-met-od-met-od.html>

Քանի որ աշակերտները լավ էին ընկալել նախորդող թեմաները, ցանկանում էին, որ այս դասը առավել հետաքրքիր անցկացվեր:

Նոր թեման սկսվեց «ԳՈՒՄ» մեթոդով, աշակերտները *գիտեմ* և *ուզում եմ իմանալ* սյունակները սկզբում լրացրին, իսկ *սովորեցի* սյունակին դասի վերջում պետք է անդրադառնային: Աշակերտները ակտիվ մասնակցեցին, հայտնեցին իրենց կարծիքները, և քանի որ պետք է կատարվեր գործնական աշխատանք, նրանք առավել հետաքրքրություն էին ցուցաբերում դասի նկատմամբ, ի վերջո «Տեխնոլոգիա» առարկայի հետաքրքրությունը հետո գործնական աշխատանքների մեջ է կայանում: Այնուհետև, հանձնարարվում է անհատականորեն տեղավորվել, որպեսզի յուրաքանչյուրը լավ պատկերացնի դրվագման աշխատանքը: Քանի որ սա առաջին փորձն է, այդ իսկ պատճառով առանձին են աշխատում սովորողները: Ուսուցչի հրահանգով երեխաները ըստ հերթականության կատարում են դրվագումը, սկզբում հանձնարարվեց երկրաչափական պատկերների դրվագում, քանի որ բուսականի համեմատ սա հեշտ է իրականացվում: Նմանատիպ աշխատանքները անհատական ձևով իրականացնելուց աշակերտը ձեռք է բերում ինքնուրույնություն և պատասխանատվության զգացում:

Դասը ամրապնդելու համար դասի ավարտին աշակերտները լրացրին *սովորեցի* սյունակը և կատարեցին հետաքրքիր աշխատանք, որը անցկացվեց «Կիսատ նախադասություն» մեթոդով: Աշակերտներին տրվեց 9 կիսատ նախադասություններ, որը իրենց ցանկությամբ ընտրեցին մեկականը՝ յուրաքանչյուրին մեկ նախադասություն, ցանկալի կլիներ, եթե մի քանի նախադասություն ընտրեին աշակերտները: Լրացնելուց հետո աշակերտները ընթերցեցին իրենց հետաքրքիր, ավարտին հասցրած նախադասությունները:

Դասը ավարտվել տնային աշխատանքի հանձնումով՝ այլումինե թերթամետաղի վրա կատարել մեկ այլ երկրաչափական, ինչպես նաև բուսական զարդանկարով դրվագում:

ԳԼՈՒԽ.4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների ներգրավվածությունը, ուշադրությունը ապահովելու համար անցկացվեց երկու դաս: Երկու դասերն էլ անցկացվեցին ինտերակտիվ մեթոդներով՝ «Մտագրոհ» կամ «Մտքերի տարափ», «ԳՈՒՍ», «Հարցադրումների», «Զրույցի», «Լուսակիր», «Կիսատ նախադասություն», ինչպես նաև անհատական մեթոդի միջոցով, աշակերտների մոտ զարգացնելու համար պատասխանատվության զգացումը և ինքնուրույնությունը: Աշակերտները կիրառելով նշված մեթոդները, բավականություն էին ստացել հենց «Կիսատ նախադասություն» մեթոդից, քանի որ իրենք այդ նախադասություններում կարող էին գրել իրենց սովորածը, տեսածը և ըմբռնածը:

Վերլուծելով հետազոտական դասերի արդյունքները, ես եկա այն եզրակացության, որ՝

- կրտսեր դպրոցականի մեջ պատասխանատվության և ինքնուրույնության զգացումը զարգացնելը կարելի է ձևավորել ինչպես գործնական, այնպես էլ տեսական, բանավոր դասերի միջոցով,
- համբերատարություն սերմանելը կրտսեր դպրոցականի մեջ, հնարավոր է իրականացնել դրվագման աշխատանքների միջոցով քանի որ մի փոքր շեղում և թերթամետաղը կարող է ծակվել,
- աշակերտը կարող է նաև երկրաչափական դրվագման միջոցով ներգործել արվեստի ոլորտ:

ԳԼՈՒԽ.5. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հ. Ավանեսյան Պրոյեկտիվ մեթոդների գիտակիրառական առանձնահատկությունների համակարգումը/ Հրանտ Ավանեսյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2017, 256 էջ
2. Ս.Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ.Աղաջանյան, Լ. Վերդյան Տեխնոլոգիա 5-րդ դասարանի դասագիրք Եր., Տիգրան Մեծ. 2014 թ.
3. «Տեխնոլոգիա» առարկայի չափորոշիչ և ծրագիր: ՀՀ ԿԳՆ նախարարություն Ս. Հովսեփյան, Մ. Աղաջանյան, Մ. Բարսեղյան, Երևան 2012թ.
4. <https://mel.fm/blog/varvara-kotelnikova/50964-chem-uroki-tehnologii-otlichayutsya-ot-urokov-truda>
5. <https://multiurok.ru/files/met-od-met-od-met-od.html>

ԳԼՈՒԽ.6. ՀԱՎԵԼՎԱԾ

ԴԱՍԱՊԼԱՆ – 1

Առարկա	Տեխնոլոգիա	Ամսաթիվ		Գիսամյակ	II	Դասարան	VII
Թեմա	Մետաղների դրվագում						
Օգտագործվող նյութեր	7-րդ դասարանի տեխնոլոգիայի դասագիրք, տետրեր, նկարներ, օրնակներ տարբեր նախշերով, կաշուն գունավոր թղթեր, թերթամետաղ, գունավոր կավիճներ, դրվագիչներ						
Դասի նպատակը	<ul style="list-style-type: none"> • Իմանալ - մետաղի գեղարվեստական մշակման ձևերը • Իմանալ – յուրաքանչյուր ճյուղի առանձնահատկությունները • Թվել – թերթամետաղների տեսակները • Ծանոթանալ – դրվագիչների հետ • Իմանալ – դրվագման աշխատանքների ճիշտ հերթականությունը 						
<i>Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ</i>							
Վերջնարդյունքները	<p>Աշակերտները կկարողանան.</p> <ul style="list-style-type: none"> • տարբերել մետաղի գեղարվեստական մշակման ճյուղերը միմյանցից, • ճանաչել յուրաքանչյուր ճյուղի առանձնահատկությունները, • թվարկել թերթամետաղների տեսակները, հաստությունը մմ-ով • ճանաչել դրվագիչները և դրվագման մուրձերը, որոնք լինում են տարբեր կշիռների: 						
Գործողություններ (ժամ՝ տևողություն)	Ուսումնական գործունեություն <i>Աշակերտ</i>	Ուսումնական գործունեություն <i>Ուսուցիչ</i>	Հարցադրումներ			Գիրատվող մեթոդ (ներ)	

Մուտք, ներկա բացակա /3ր/				
Սկիզբ /5ր/	Աշակերտները բացում են դասագրքերը, նոթագրում են, հիշում են անցածը, պատասխանում են հարցերին:	Ողջունում է դասարանին, ն/բ անում, հարցերի միջոցով փորձում հիշեցնել նախորդ դասերին անցածը, լսում է կարծիքները:	«Արվեստ» բառը ինչի՞ հետ եք ասոցացնում:	Մտագրոհ
Ընթացք /25-30ր/	Պատասխանում են հանձնարարված դասը, կարդում են մետաղի գեղարվեստական մշակման մասին տեղեկություններ:	Ունկնդրում է աշակերտներին, մտապահում իրենց պատասխանները:	-Ի՞նչ է իրենից ներկայացնում դարբնագործությունը: -Ի՞նչ նյութերով են կատարում դրվագում: -Որո՞նք են դրվագման գործիքները:	Հարցադրումների
	Ունկնդրում են նոր նյութը, և իրենց մոտ կատարում են գրառումներ:	Ներկայացնում է նոր նյութը, բացատրում հիմնական հասկացությունները, որ դրվագման աշխատանքներ կատարում են դրվագիչներով, ինչպես նաև արույրից, պղնձից մշակված թերթամետաղներով,	-Ի՞նչ է դրվագումը: -Դրվագման ի՞նչ ձևեր գիտեք:	Զրույցի

		որոնց հաստությունը պետք է լինի 0,2-1մմ հաստությամբ պողպատից:		
Ավարտ /5ր/	Եթե աշակերտը բարձրացնում է կանաչ թերթիկը, նշանակում է ամբողջությամբ յուրացրել է տվյալ թեման: Եթե բարձրացնում է դեղին թերթիկը, նշանակում է մասնակի է յուրացրել թեման: Իսկ կարմիր թերթիկ բարձրացնում են այն աշակերտները, ովքեր չեն յուրացրել թեման:	Ներկայացնում է դասի նպատակների և վերջնարդյուքների իր տարբերակը, աշակերտներին հանձնարարում է, որ յուրաքանչյուրը իր նշումներ կատարի և «Լուսացույցի» մեթոդով ներկայացնի իր նյութի յուրացման աստիճանը: Նախօրոք ներկայացնում է մեթոդի անցկացման ձևը, ներկայացնում է քարտերի գույների նշանակությունը:	-Ամբողջությամբ յուրացրել է թեման /կանաչ/ -Մասնակի է յուրացրել թեման /դեղին/ -Չի յուրացրել թեման /կարմիր/:	Լուսակիր
Տնային աշխատանք 3ր	Այլումինե թերթամետաղը փորձել համաչափ կտրել 15սմ-ի չափով և կատարել հղկում, վերջնամշակում: Պատրաստել բոլոր անհրաժեշտ նյութերը, հաջորդ դասի համար /թերթամետաղ 15սմ-ի չափով, դրվագիչ, սպիտակ գուաշ, վրձին, ավազե պարկով տուփ, փոքր մուրճ/:			

ԴԱՍԱՊԼԱՆ – 2

Առարկա	Տեխնոլոգիա	Ամսաթիվ		Կիսամյակ	II	Դասարան	VII
Թեմա	Դրվագման տեխնոլոգիան						
Օգտագործվող նյութեր	7-րդ դասարանի տեխնոլոգիայի դասագիրք, տետրեր, նկարներ, օրնակներ տարբեր նախշերով, կաշուն գունավոր թղթեր, թերթամե գունավոր կավիճներ, դրվագիչներ, մուրճ, ավագե պարկով տուփ, սպիտակ գուաշ, վրձին						
Դասի նպատակը	<ul style="list-style-type: none"> • Իմանալ - մետաղի գեղարվեստական մշակման ձևերը • Իմանալ – դրվագման առանձնահատկությունները • Թվել – թերթամետաղների տեսակները, հաստությունը • Ծանոթանալ – դրվագիչների, կատարվող աշխատանքի հետ • Իմանալ – դրվագման աշխատանքների ճիշտ հերթականությունը և փուլերը • Ձեռք բերել ինքնուրույնություն և պատասխանատվության զգացում 						
<i>Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ</i>							
Վերջնարդյունքները	<p>Աշակերտները կկարողանան.</p> <ul style="list-style-type: none"> • տարբերել դրվագումը մյուս մետաղի գեղարվեստական մշակման ճյուղերից, • ճանաչել դրվագված դետալը փորագրվածից, • իրականացնել դրվագման աշխատանքներ, • կատարել աշխատանքը փոքրիկ խմբերով, • զգուշորեն և ինսամքով օգտվել պահանջվող գործիքներից, • ինքնուրույն կողմնորոշվել զարդերի ընտրման գործում, • պատասխանատու լինել իրենց քայլերի համար: 						

Գործողություններ (ժամ` տևողություն)	Ուսումնական գործունեություն <i>Աշակերտ</i>	Ուսումնական գործունեություն <i>Ուսուցիչ</i>	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ (ներ)
Մուտք, ներկա բացակա /3ր/				
Սկիզբ /5ր/	Աշակերտները բացում են դասագրքերը, հիշում են անցածը, պատասխանում են հարցերին:	Ողջունում է դասարանին, ն/բ անում, հարցերի միջոցով փորձում հիշեցնել նախորդ դասերին անցածը, լսում է կարծիքները:	-Ի՞նչ գիտեք այս թեմայի վերաբերյալ: -Ի՞նչ եք ուզում իմանալ այս թեմայի մասին: Իսկ դասի վերջում «Սովորեցի» սյունակը:	ԳՈԻՍ
Ընթացք /25-30ր/	Ունկնդրում են նոր նյութը, և իրենց մոտ կատարում են գրառումներ: Աշակերտներն աշխատում են անհատական կարգով, քանի որ սա իրենց առաջին դրվագումն է: Բացի դրանից, անհրաժեշտ է որ, որպես	Ներկայացնում է նոր նյութը, բացատրում հիմնական հասկացությունները, հետագա կատարվող աշխատանքը, աշխատանքի ընթացքը: Ներկայացնում է կատարվող աշխատանքի փուլերը, առանձնահատկությունները, ճիշտ հերթականությունը,	-Որո՞նք են դրվագման գործիքները և նյութերը: -Դրվագման աշխատանքի առաջին փուլը ո՞րն է: -Դրվագման ժամանակ ինչպիսի՞ անվտանգության կանոնների պետք է հետևել: -Դրվագման աշխատանքների ժամանակ ինչպիսի՞ արտահագուստ պետք է կրել:	Հարցադրումների

	արական սեռի ներկայացուցիչներ ձեռք բերեն ինքնուրույնություն և պատասխանատվության զգացում:	գործիքների և նյութերի օգտագործման կարգը:		
Ավարտ /5ր/	Յուրաքանչյուրը իր հերթին ներկայացնում է իր նախնական և վերջնական գիտելիքները, լրացնում են «Սովորեցի» սյունակը:	Ներկայացնում է դասի նպատակների և վերջնարդյուքների իր տարբերակը, աշակերտներին հանձնարարում է լրացնել «ԳՈՒՍ» մեթոդի վերջին սյունակը՝ «Սովորեցի»:	-Ի՞նչ սովորեցի: -Ի՞նչ նոր գաղափար ձեռք բերեցի դասի վերջում:	Անդրադարձ «ԳՈՒՍ» մեթոդին
	Յուրաքանչյուրը ցանկություն հայտնեց մեկական կիսատ նախադասություն ընտրել և ավարտին հասցնել:	Ներկայացնում է մեթոդի բովանդակությունը և աշակերտներին տալիս է այլընտրանքի տարբերակ:	-Ես այսօր սովորեցի... -Ինձ զարմացրեց... -Այսօրվա դասի ամենաօգտակար բանը... -Ինձ հետաքրքրեց... -Այս դասի ժամանակ ինձ ամենաշատը դուր եկավ... -Մի բան որ չհասկացա...	Կիսատ նախադասություն

			<ul style="list-style-type: none"> -Մի բան, որ կուզեի ավելին իմանալ... -Այս դասից հետո ես զգում եմ... -Այս դասից ավելին կսովորեի, եթե... 	
Տնային աշխատանք 3ր	Այլումինե թերթամետաղի վրա կատարել մեկ այլ երկրաչափական, ինչպես նաև բուսական զարդանկարով դրվագում:			